Սույն գիրքը թվայնացվել է Գրքասեր ՀԿ-ում՝ հայերենով գրականության պահպանման, հանրայնացման և ժամանակակից թվային միջավայրում հասանելի դարձնելու նպատակով:

Կազմակերպության նախաձեռնությունը միտված է հայերեն գրքերի և տեքստերի տարածմանը, ընթերցանության խթանմանը և մշակութային ոչ նյութական ժառանգության պահպանությանը՝ ապահովելով դրանց հասանելիությունը հնարավորինս լայն շրջանակների համար:

Մենք հավատում ենք, որ թվայնացումը ոչ միայն պահպանման միջոց է, այլև գիտելիքի, գրականության և մշակույթի շարունակական փոխանցման կարևոր ուղի:

Գրքասեր ՀԿ-ն գրքերը ձայնագրում և թվայնացնում է բացառապես Ձեր նվիրատվությունների շնորհիվ: Կազմակերպությանը կարող եք օժանդակել հետևյալ հղումով՝ https://grqaser.org/hy/donate

Ռուս գրականություն, Արձակ, Պատմվածք 16+

Անտոն Չեխով

Մեխից կախ

Նևսկի պրոսպեկտով հազիվհազ քայլելով աշխատանքից վերադառնում էին մի խումբ կոլեժսկի ռեգիստրատորներ ու նահանգական քարտուղարներ: Նրանց իր տունը տոնախմբության էր տանում անվանակոչիկ Ստրուչկովը:

— Այ թե քիչ հետո պիտի խժռենք, հա՛, սիրելիներս, — բարձր երազում էր անվանակոչիկը: — Խիստ մեծ ախորժակով կխժռենք: Կինս կարկանդակ է պատրաստել: Երեկ երեկոյան ինքս եմ այլուրի համար վազ տվել: Կոնյակ ունեմ. վորոնցովյան օղի... Կինս, հավանաբար, անհամբեր սպասում է:

Ստրուչկովն ապրում էր շատ հեռու՝ սատանայի ծոցում: Քայլո՛ւմ էին, քայլում դեպի նրա տունը և, վերջապես, հասան: Մտան նախասենյակը: Քթերին դիպավ կարկանդակի ու տապակած սագի հոտը:

— Զգո՞ւմ եք,— հարցրեց Ստրուչկովն ու գոհունակությամբ ծիծաղեց: — Հանվեցե՛ք, պարոնայք: Մուշտակները դրեք սնդուկի վրա: Իսկ որտե՞ղ է Կատյան: Է՛յ, Կա՛տյա: Բոլոր մասերից հավաքել-բերել եմ: Ակուլինա, եկ օգնիր պարոններին, որ հանվեն:

— Իսկ սա ի՞նչ բան է,— հարցրեց եկածներից մեկը, ցույց տալով պատը:

Պատին խփված էր մի մեծ մեխ, իսկ մեխից կախված էր մի նոր գլխարկ՝ պսպղուն հովանիով ու կոկարդով: Չինովնիկները նայեցին իրար ու սփրթնեցին:

— Դա նրա գլխարկն է,— շշնջացին նրանք: — Նա… այստե՞ղ:

— Այո, նա այստեղ է,— քրթմնջաց Ստրուչկովը: — Կատյայի մոտ է... Դուրս գանք, պարոնայք: Մի որևէ պանդոկում նստենք-սպասենք, մինչև որ նա գնա:

Եկողները կոճկեցին իրենց մուշտակները ու դանդաղ քայլեցին դեպի պանդոկը: Սագի հոտ է գալիս քո տնից, որովհետև սագից ոչ պակաս մեկն է նստած քեզ մոտ,— ազատամտությամբ խոսեց արխիվարիուսի օգնականը: — Ո՞ր քամին է նրան բերել: Շո՞ւտ կգնա:

— Շուտով: Երկու ժամից ավելի երբեք չի նստում: Ուտել եմ ուզում: Ամենից առաջ օղի կխմենք ու վրան էլ կիլկի ուտենք... Հետո կկրկնենք, սիրելիներս... Երկրորդ գավաթից հետո իսկույն կանցնենք կարկանդակին, այլապես ախորժակներս կկորչի... Կինս լավ կարկանդակ է պատրաստում: Շչի կլինի...

— Իսկ սարդինկաներ առե՞լ ես:

— Երկու տուփ: Չորս տեսակ երշիկ... Կինս էլ, երևի, ուտել է ուզում... Անիծվածը ներս ընկնելու ժամանակ է գտել:

Մեկուկես ժամ նրանք նստեցին պանդոկում, ձևականության համար խմեցին մեկական բաժակ թեյ ու նորից գնացին Ստրուչկովի տուն: Մտան նախասենյակը: Նախկինից ավելի ուժեղ հոտ էր գալիս: Խոհանոցի կիսաբաց դռնից չինովնիկների աչքովն ընկան տապակած սագն ու մի թաս վարունգ: Ակուլինան ինչ-որ բան էր դուրս բերում վառարանից:

— Դարձյալ գործերս անհաջող է, սիրելիներս:

— Հը, ի՞նչ կա:

Չինովնիկների փորերը հուսահատությունից կծկվել էին: Քաղցը կատակ չէր անում, իսկ անիծված մեխի վրա կախված էր կզաքիսի մորթուց մի գդակ:

— Դա Պրոկատիլովի գդակն է,— ասաց Ստրուչկովը: —Դուրս գանք, պարոնայք: Մի որևէ տեղ սպասենք... Սա երկար չի նստում...

— Եվ այդ գարշելին այսպիսի անուշիկ կի՞ն ունի,— հյուրասենյակից լսվեց մի խռպոտ, թավ ձայն:

— Հիմարներին բախտը ժպտում է, ձերդ գերազանցություն,— արձագանքեց մի կնոջ ձայն:

— Դուրս գանք,— հառաչելով ասաց Ստրուչկովը:

Նորից պանդոկ գնացին: Պահանջեցին գարեջուր:

— Պրոկատիլովը ուժ է,— սկսեցին չինովնիկները մխիթարել Ստրուչկովին: — Մի ժամ կնստի կնոջդ մոտ, բայց դրա փոխարեն քեզ համար... դա տասը տարվա երջանկություն է: Բախտը քեզ հետ է, սիրելիս: Ինչո՞ւ վշտանալ: Վշտանալու հարկ չկա:

— Ես առանց ձեր ասելու էլ գիտեմ, որ հարկ չկա: Բանը դա չէ: Ցավալին այն է, որ սոված ենք:

Մեկ և կես ժամ անց դարձյալ գնացին Ստրուչկովի տուն: Կզաքիսի մորթուց գդակը դեռ կախված էր մեխից: Ստիպված եղան դարձյալ նահանջել:

Միայն երեկոյան՝ ժամը յոթն անց մեխն ազատվեց գդակից, և արդեն կարելի էր ճաշակել կարկանդակը, որը չորացել էր, շչին սառել, սագը շատ տապակվելուց այրվել. Ամեն բան փչացրել էր Ստրուչկովի կարիերան: Սակայն ուտում էին ախորժակով:

1883